№ 95 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 27 **1891** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 27 № 95

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պարտք և իրաւունք. Մեր գիւղացու վիճակը. Նամակ Կարսից. Նամակ Բաթումից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պարսկաստան և Թիւրքիա. Տեղեկութիւններ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՏՔ ԵՒ ԻՐԱՒՈՒՆՔ

—

Կայ արդեօք իրաւունք առանց պարտականութեան։ Ի հարկէ, ոչ։ Բայց մեզանում ուրիշ տեսակ են հասկանում։ Մեր ազգային հասարակական գործողներից հազիւ թէ հարիւրից մէկը ճանաչում է իր պարտականութիւնը և գործում է ինչպէս պէտք է։ Պետական ծառայութեան մէջ եւանդով գործող պաշտօնեան՝ ազգային հասարակական պաշտօնում վայնաչարի է գործում և ամեն կերպ աշխատում է մի կերպ գլխից ազատել ձանձրալի պաշտօնը։ Եւ այդ նրա համար որ առաջին դէպքում նա շատ ռոճիկ ստանալուց ի զատ՝ յոյս ունի ստանալ իշխանութեան «բարեհաճութիւնը», իսկ երկրորդ դէպքում՝ նա պէտք է ձրի ծառայութիւն անէ, բայց անշնորհակալ ժողովրդից փառաբանութիւն ու գովեստ չը պէտք է ստանայ։ Եւ այդպիսով նկատում էք, որ մեր ազգային հասարակական գործերը հետզհետէ կաղում են, մի կերպ քաշ են տրվում։ Ուսումնարանի հոգաբարձուն ամբողջ տարով ոտք չէ դնում ուսումնարան, ամբողջ գործավարութիւնը ձգում է այս և այն իր հաւատարիմ մարդկանց վրա, չը գիտէ քանի բաժանմունք, որքան սովորող ունի դպրոցը, անհոգ է ուսումնարանի նիւթական մասը բարելաւելու վերաբերութեամբ և ամիսներով ռոճիկ չէ վճարում ուսուցիչներին, բայց նոյն հոգաբարձուն եռանդոտ կերպով պաշտպանում է իր իրաւունքը՝ երբ հարցը գալիս է իր ազգական կամ խնամի անպէտք ուսուցչին պաշտօնում թողնելու գործին։ Մեր ուսուցչական կնանքում եղել են դէպքեր, որ ուսուցիչը ստիպված է եղել որոշ կաշառք տալ այս կամ այն հոգաբարձուին, տեսչին, որպէս զի նրանք ընդունէին իրան դպրոցի մէջ։ Եղել են և կան դէպքեր, որ հոգաբարձուն ամեն կերպ աշխատել է պաշտպանել մի ապիկար ուսուցչական խումբ միմիայն այն պատճառով, որ ինքը ճարպիկ թղթախաղի մէջ դատարկում է ուսուցիչների գրպանները և չէ կամենում կամենատու կողերից զըրկվել։ Ապագ ուսուցիչը չէ կամենում անպէտք ուսուցչին արձակել, որովհետև նրա մի այլ պաշտօնավարութեան մէջ՝ ուսուցիչը նրա ձրի գրագիրն է։ Հոգաբարձուն և տեսուչը չեն կամենում արձակել մի խեղկատակ ուսուցչի միմիայն նրա համար, որ դա նրանց տների ծախսարարն է։ Տեսուչը ամեն կերպ պահպանում է մի ուսուցչի և ամեն ջանք գործում է այդ ուսուցչի ամիսներով թողած դասերի փողը յետ չը տրվելուն, որովհետև ինքը օգուտ քաղելով ուսուցչի թոյլ կողմերից՝ քառորդ վճարը կանխիկ տալով վերցրել է նրա տարեկան ռոճիկը։ Բայց նոյն այդ տեսուչը, ամբողջ տարին անցնելուց յետոյ, դեռ անտեղեակ է թէ ո՞ր ուսուցիչը ինչ առարկայ է դասատալիս։ Ուսուցիչը ամբողջ տարին դասեր է թողնում առանց պատճառի, հակառակվում է ուսումնարանի վարչութեան անօրինութիւններին, աշակերտներին և աշակերտուհիներին ամեն օր դանակոծում է և երբ վարչութիւնը կամենում է նրան հեռացնել՝ նա ահագին աղմուկ է բաց անում, իրաւունք է պաշտպանում։ Երեցփոխը եկեղեցու սեպհականութիւնները իւրացնում է, անձնական անյուսալի առնելիքները եկեղեցու դրամով սաղացնում է, հաշուետուութիւնից խոյս է տալիս, եկեղեցու դրամները առանց տոկոսի այս և այն աղային է տալիս պաշտպաններ ճարելու դիտմամբ, բայց դարձեալ իրաւունքների անունով է խօսում, «ասարամ, քէսերէմ» է անում։ Եւ այսպէս ամեն ոք անտես առնելով իր պարտականութիւնները, կամ նոյն իսկ ի չարը գործ դնելով դրանց՝ ընդհակառակն կրակ է կորում երբ դիպչում են նրանց այս կամ այն իրաւունքին և իրանց ամբողջ եռանդը սպառում են երևակայական իրաւունքներ պաշտպանելու վրա՝ ոտնակոխ անելով և այլոց իրաւունքները, ոտնակոխ անելով խոհեմութիւնը, համեստութիւնը և բանականութեան պահանջները։ Պարտականութիւններ կատարելու մէջ թոյլ, անտարբեր, իսկ իրաւունքներ պաշտպանելում եռանդոտ, քաջ, ընդունակ—ահա մեր գործողների պատկերը։

***

ՄԵՐ ԳԻՒՂԱՑՈՒ ՎԻՃԱԿԸ

—

Մի թեթև զարկ, մի աննշան հարուած անգամ ընդունակ է գլորել գիւղացուն, ընդունակ է ընդարձակել նրա այժը, հասցնել նրան չքաւորութեան գագաթնակէտին։ Գիւղացին, այդ աղնիւ մշակը, երկրի այդ ամենատոկուն տարրը, չունի ապահովութիւն, չունի զէնք ընութեան աւերիչ հոսանքին հակառակելու համար, չունի ինքնօգնութեան սկզբունք։ Հէնց որ տարիներից մինը լինում է երաշտ, հէնց որ միշտ ոսկի թափող երկինքը ուղարկում է մի երկու ժամ կարկուտ, կամ յայտնվում է բազմաթիւ մորեխի մի անգութ զօրք,—մեր գիւղացին կորցնում է իր այժը, մընում է անօգնական, չոքում խոնարհում է տվածութեան առաջ և չէ ունենում մի բան միւս տարվայ ցանքսի համար։ Բաւական է, որ մի հիւանդութիւն պատահի նրա անասունին կամ յանկարծակի մի պահանջ լինի աղջիկը մարդու տալու, ապա միւս օրը կանդնած է մեր գիւղացին վիզը ծռած, աղերսալի դէմքով մի որ և է հարուստ աղայի դրանը մի ծալած թուղթ ձեռքին բռնած։ Այդ թուղթը պարտամուրհակ է. նա հիմա տոկոսով փող է վեր առնում իր ցաւին դարման անելու համար։ Անխիղճ, անգութ աղան էլ հէնց այդ կրիտիական նեղ րոպէին էր սպասում. նա տեսնում է, որ իր թշուառ որսը, թէև իւղալի պատառ չէ, բայց ճարահատեալ դրանից էլ օգտվում է... Ո՞ւմ չէ յայտնի, որ այսպիսի հանգամանքների տակ եղել են դէպքեր, երբ փողատէրը պահանջել է ամեն մի 100 ռուբլու համար 200 ռ., կամ էլ աւելի տոկոս։ Եթէ սա էլ չէ աջողվում, ապա ծախում է գիւղացին իր վերջին կարպետը, իր ընկեր եզը, իր չը հասած թոմբը, խաղողը և ստանում արժողութեան հազիւ թէ կէսը։ Կարօտութիւնը ստիպում է նրան, հակառակ իր ցանկութեան, անել մի գործ, որը թուլացնում, մաշում է նրա նիւթական առանց այն էլ սպառված այժը, որն աւաղակի նման խլում, յափշտակում է նրա տկլոր ողորմելի զաւակների չոր հացի կտորը։ Ո՞ւր դիմէ գիւղացին, ո՞ր մարդասէրին յայտնէ իր ցաւը։ Աղերսելով մեկնում է նա իր ձեռքը իր անաջողութեան ժամանակ դէպի հարուստը, խնդրում է նրանից օգնութիւն, վերջինս էլ թշուառի բեռը վերցնելու տեղ, գնում ջլատում, քերթում, մաշկում է նրա կաշին։ Եթէ սովորած լինէին մեր գիւղացիները ապահովութեան, ինքնօգնութեան սկզբունքի դէմ տարրական ուսումը, ապա չէին ենթարկվի կրկնակի վնասի, չէին թողնի իրանց զաւակների համար ժառանգական պարտամուրհակներ։ Ժամանակ է արդէն գիւղերում այդ նպատակի համար հիմնել ընկերութիւններ։ Գուցէ շատերն ասեն թէ մեր գիւղացիներն այնքան զարգացած և հարուստ չեն, որ դիւղական բանկեր ունենան, փոխատու կասսաներ, օգտաւէտ ընկերութիւններ հիմնեն, այժ չունեն՝ զանազան հիմնարկութիւններ կազմել և այլն... Բայց սա մի անուրանալի ճշմարտութիւն է, որ եթէ հարիւր հազարներ էլ չունենան, այսու ամենայնիւ փոքրից սկսելով կարող են ժամանակով հարուստ ընկերութիւնների տէր դառնալ։ Բոլորովին աւելորդ չէ ներկայացնել այստեղ մի գիւղական կազմակերպութեան, մի թեթև հիմնարկութեան նմուշը, որն առանց մեծ դումարի էլ կարելի է գլուխ բերել։ Մեզ հետ հարևան ապրող գերմանացի կօլօնիստներն ունեն այսպէս ասած «գիւղական ընկերութիւն», որը հիմնված լինելով ինքնօգնութեան սկզբունքի վրա, բաւական թեթևութիւններ է պատճառում հասարակութեան։ Այդ գերմանացի գիւղացիները ունեն մի ընդարձակ հասարակաց շտեմարան, ուր ամեն մի ընտանիք պարտաւոր է տարեկան մի պուդի չափ ցորեն ածել։ Ովկիանոսն էլ փոքրիկ կաթիլներից է բաղկացած։ Եւ այսպէս տասնեակ տարիների ընթացքում ժողովում են ցորենի մի մեծ քանակութիւն, այսպէս ասած մի մայր դումար։ Որպէս զի խիստ հնութիւնից ցորենը չը փչանայ, 3—4 տարէնը մի անգամ բաժանում են ընտանիքների վրա հին ցորենը (եթէ միայն անգործադրելի է մնացած) և միւս տարի հաւաքում նրա տեղը նորը, ի հարկէ, աւելացնելով սրա վրա միշտ տարեկան պահանջված վճարը։ Եթէ հասարակութեան մի որ և է անդամի արտերը չեն բերում, անասունը կոտորվում է կամ պատահում է մի որ և է անսպասելի չարիք, ապա դիմում է նա գիւղական հասարակութեան, որը յիշեալ մայր դումարից տալիս է նրան՝ որքան նա կարիք ունի, պահանջելով նրանից մի թեթև տոկոս յօգուտ ընկերութեան։ Եթէ լինում է մի որ և է քաղաքացիական պահանջ, դիմում են դարձեալ նոյն շտեմարանին։ Պարզ է, որ մի երաշտ կամ սով տարի այդ ընկերութիւնը կարող է նաև թեթևացնել բոլոր կարօտ գիւղացիների պահանջը, բաժանելով նրանց այդ հաւաքված ցորենի ահագին պաշարը։ Մթթէ երէկ մեզ մօտ եկած փորձառու կօլօնիստներն աւելի ապահով պէտք է լինեն քան թէ մենք, միթէ նրանք էլ կուլտուրայի նոյն աստիճանների վրա չեն գտնվում, ինչպէս և մեր գիւղացիները և վերջապէս միթէ դժուար է մեր գիւղացիների համար կազմել այսպէս և ուրիշ սրա նման օգտաւէտ ընկերութիւններ *)։ Թող գիւղացի կանայք, իրանց ոսկեայ և արծաթեայ անմիտ զարդերը, այդ մեռած և իրանց աւելի տգեղացնող կոճակները մէջ տեղ բերեն, թող հարսանիքներում և թաղման ժամանակ չուայլութեամբ վատնած փողերը միացնեն, թող տղամարդիկ խոստանան ձմեռ ժամանակ չը վատնել, այլ գործել և սրա արդիւնքը նուիրել ընկերութիւն կազմելու համար,—և ահա նրանք կարող են ոչ միայն մի պատուհասի ժամանակ ազատել իրանց՝ աղքատութեան անգութ ճանկերից, այլ և կունենան այժ նաև դպրոցներ, հիւանդանոցներ, խնայողական արկղներ բանալու։ Եթէ մենք մեզ չենք օգնի, ոչ ոք մեզ չի օգնի. եթէ չենք յօժարի ապրել՝ ամենը մէկի համար ու մինը ամենի համար,—ամեն բան ծուռ կերթայ։

Ի. Մ.

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

—

Օգոստոսի 15-ին

Պ. Կար. Յովհաննէսեանց պատրաստած ունի Աղէքսանդրոպոլ քաղաքի պատմութիւնը, որի մէջ բնականաբար յիշվում են թէ տեղական մեծածախս եկեղեցիների շինութիւնների, թէ ուսումնարանների հիմնարկութեան, թէ թատրոնական գործի սկզբնաւորութեան պատմութիւնները։ Գրքուածքի մէջ կան շատ հետաքրքիր դրագրութիւններ, կաթողիկոսական կոնդակներ և այլն։ Ան-

*) «Մշակը» միշտ ընդդէմ է եղել հացի ամբարների գաղափարին։ Մենք դրանց տեղ առաջարկել ենք դրամական պահեստի դումար։ Տես «Մշակ» անցեալ սեպտեմբերի համարները, Գրիգոր Արծրունու նամակներ Երեւանեան նահանգից։

Խմբ.

ցեալ տարի պարոնը կամեցաւ իր ստուար և հետաքրքիր աշխատութիւնը տպել տալ «Արարատի» մէջ, բայց մի անդամ ևս համոզվեցանք, որ «Արարատի» մէջ տպվել կարող են միմիայն զանազան «ընտրեալների» անհամ «ճիռօկները»։ Ցանկալի էր որ գտնվէին մարդիկ, որոնք միջոց տային ի լոյս ընծայելու այդ հետաքրքիր աշխատութիւնը։ Նոյն պարոնը խոշոր դիրքով լուսանկարներ է պատրաստած Անիի և Շիրակի հնութիւններից։ Նա մտադիր է Պետերբուրգում տպագրել տալ այդ լուսանկարները՝ եթէ հնար լինի նոյն իսկ գունաւոր կերպով։

«Մշակի» № 89-ի ներքին լուրերի բաժնում տպված Կաղզուանից հաղորդված լուրը կրճատված դուրս գալու առիթով՝ փոքր ինչ անհասկանալի է դուրս եկել։ Այդտեղ ասված է Վարդիհեր ուխտատեղու արդիւնքի մասին թէ. «այդ արդիւնքը տարուց տարի ոչ միայն նուազում է, այլ և իսպառ ոչնչանում, կորչում է։ Արդեօք հոգևոր բարձր իշխանութեան գործը չէ քննել և իմանալ՝ ո՞ւր է կորչում արդիւնքը»։ Քանի որ նոյն լուրի սկզբում ասված է թէ այս տարի ուխտաւորներ չը գնացին Վարդիհեր, ուրեմն բնականաբար եկամուտ էլ չէր կարող լինել։ Արդիւնքի կանոնաւորապէս իր նպատակին ծառայելուն կամ տեղ հասնելուն ևս անտեղեակ եմ։ Հոգևոր բարձր իշխանութեան ուշադրութիւնը մենք կամեցանք հրաւիրել այն բանի վրա թէ ինչ պատճառ կայ, որ ուխտաւորները այլ ևս չեն գնում Վարդիհեր, որով և իսպառ կորչում է այդ ուխտատեղու արդիւնքը մեր հոգևոր իշխանութեան համար։ Բանն այն է, որ ուխտի ժամանակ կարգ պահպանելու համար պոլիցիական հսկողութիւն չէ նշանակվում, ինչպէս այդ լինում էր ուրիշ անգամներ։ Այդ պատճառով հեռաւոր քաղաքներից ծախս անող եկողները ստիպված են լինում Վարդիհերի հէնց մօտից՝ Կաղզուանից տխուր, տրտում վերադառնալ։

***

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

—

Օգոստոսի 16-ին

Բաթումում կայ մի գրասենեակ, որը արտօնութիւն ունի բոլոր արտասահմանեան շոգենաւերի ապրանքները իր մշակներով բարձելու և դարդակելու. այդ մարդու մօտ բանում են հարիւրաւոր մշակներ։ Ամբողջ օրը, տասն և չորս ժամ բանելուց յետոյ, այդ մարդիկ իւրաքանչիւրը մի տոմսակ ձեռքին, որի վրա նշանակված է վարձի քանակութիւնը, ամեն երեկոյ խմբվում են յիշեալ գրասենեակի առջև իրանց հասանելիք վարձը ստանալու, բայց այդտեղ նրանք ստիպված են երկար հերթի սպասելու։ Սակայն նրանց օրվայ այդ երկար և ծանր աշխատանքից յետոյ հանգստութիւն է հարկաւոր. նրանց հարկաւոր է գոնէ մի քանի ժամ քնել, և ահա յուսահատված, շատերը նրանցից դիմում են սրան նրան, իրանց տոմսակը մի բան դեղջելով վեր առնելու և իրանց հասանելին իրանց տալու։ Այդ տեսակ հեշտ աշխատանքի ետևից ման եկող մարդիկ շատ են, և ահա մի ռուբլու տոմսակից՝ 10, 16, նոյն իսկ 20 կոպէկ պակսեցնելով, տոմսակը առնում են, և յետոյ գրասենեակին ներկայացնելով փողերը ստանում։ Երևակայեցէք ինչ դրութեան մէջ պիտի լինի մարդը, որը ամբողջ օրը չարչարվելուց յետոյ, իր հնչին օրավարձից ցանկանայ 10, 20 կոպէկ զեղչել, միայն թէ աղատվէր շուտով։ Բացառութիւններ չեն դրանք. դա այնքան սովորական մի բան է դարձել այդ կօնտորայում, որ նրա կողքին մի փռնչի, ինչպէս պատմում են, հացից այնքան չէ աշխատում, որքան այդ զեղչից։ Նոյն իսկ կօնտորայում ծառայողներից մինը այդ գործով պարապում է և ինքն էլ էսկօնտ (զեղչ) է անում այն մշակների վարձից, որոնք շուտ են ցանկանում հաշիւը ստանալ, մի և նոյն ժամանակ առանձին տոկոս էլ ստանալով այն

մարդկանցից, որոնք զեղչով տոմսակ ունեն առած։

Ես կարծում եմ, որ գրասենեակի կառավարչի ուղղակի պարտականութիւնն է հսկել մի ապօրինի վարմունքի վրա։ Գործը այս րօպէիս իրան ձեռքումն է և հազարներով օգուտ է տալիս իրան։ Նա չը պիտի զրկէ այդ թշուառներին, որոնք ամբողջ օրը մի քանի կօպէկի համար դառն քրտինք են թափում, նրա համար ոչինչ դժուարութիւն չը կայ մի փոքր աւելի վաղ և աւելի արագ բաժանելու բանուորների վարձը և իր գործակատարի այդ անվայել գործունէութեանը վերջ տալու։

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզանից անկախ պատճառներով «Մշակի» ներկայ համարը չը կարողացանք հրատարակել իր ժամանակին, այն է շաբաթ, օգոստոսի 24-ին, այլ հրատարակում ենք այսօր։

—

«Մուրճ» ամսագիրը (իր յուլիս և օգոստոս տետրակում) տպել է իր ներքին տեսութեան բաժնում մի անյայտ պարոնի հետևեալ կարծիքը տեղակալական հարցի առիթով։ «Ես քննեցի բոլոր այն պաշտօնական թղթերը, որ կարողացայ ձեռք բերել։ 1836-ից դէսը, այն է Պոլօժէնիէի հաստատվելուց յետոյ, իւրաքանչիւր կաթողիկոսի մահից յետոյ նշանակվել է տեղակալ, առանց որ և է բացառութեան, սինոդի օրագրութեամբ։ Տեղակալ եղել է միշտ, առանց բացառութեան՝ Էջմիածնում ներկայ եղող սինոդի անդամներից աւագագոյնը։ Յովհաննէս, Ներսէս, Մատթէոս, Գէորգ կաթողիկոսներից յետոյ, եղել են տեղակալներ՝ Բարսեղ, Ղուկաս, Ասլանեանց Յովհաննէս, Վեհապետեան Գէորգ, Մկրտիչ Բաբամեան և Մակար, դարձեալ Մկրտիչ և դարձեալ Մակար և վերջապէս երրորդ անգամ Մկրտիչ Բաբամեան։ Ոչ մի կօնդակի յիշատակութիւն չը կայ, այլ իւրաքանչիւր անգամ տեղակալը եղել է սինոդի առանձին օրագրութեամբ։ Բոլոր տեղակալները կամ տեղապահները կրել են «տեղակալ աաենապետի» տիտղոսը, իսկ սինոդից դուրս՝ «տեղակալ, տեղապահ, տեղակալ մայր-աթոռի, կաթողիկոսական տեղակալ» տիտղոսները, առանց խորութեան, թէ պաշտօնական և թէ ոչ պաշտօնական գրութիւնների մէջ։ Հէնց որ 1882 թուին մեռնում է Գէորգ կաթողիկոսը, եթէ Մակարի իբր թէ ունեցած կօնդակը գոյութիւն ունենար, պէտք է որ նա լինէր անմիջապէս տեղակալ։ Բայց ինչ ենք տեսնում. իսկոյն սինոդում օրագրութեամբ տեղակալ է հրատարակվում Մկրտիչ արքեպիսկոպոս Բաբամեան, սինոդի աւագագոյն անդամը։ Բայց Գէորգ կաթողիկոսը, դեռ կենդանութեան ժամանակ առաջարկել էր Մակարին իբրև սինոդի անդամ և հէնց որ Մակարի հաստատութիւնը, որպէս սինոդի անդամ գալիս է, Մակարը, իբրև ձեռնադրութեամբ աւագագոյն (աւելի աւագագոյն քան Մկրտիչ), գալով Էջմիածին, անմիջապէս դառնում է տեղակալ «օրագրութեամբ սինոդի», և այդ օրագրութեան մէջ չէ ասված որ Մակարը տեղակալ է, որովհետև կօնդակ ունի. կօնդակի յիշատակութիւն չը կայ ոչ պաշտօնական քաղուածներում («Արարատ» ամսագրում) և ոչ օրագրութեան մէջ,—այլ միայն որովհետև այդպէս է պահանջում Պոլօժէնիէն։ Վրա է հասնում Ալէքսանդր III կայսրի թագադրութեան հանդէսը և Մակարը մայր-աթոռի կողմից, իբրև ներկայացուցիչ, գնում է Մօսկվա։ Սինոդը իսկոյն ժողովվում է և նորից օրագրութեամբ տեղակալ է ճանաչում ներկայ աւագագոյն անդամին, Մկրտիչ արքեպիսկոպոսին։ Մակարը վերադառնում է Մօսկվայից և ահա սինոդը նորից օրագրութիւն է կազմում, որով տեղակալութիւնը անցնում է Մակարին։ Ընտրութիւններից յետոյ, երբ Ներսէս պատրիարքը ընտրվում է առաջին կաթողիկոսացու, Մակարը թողնում է Էջմիածին և գնում իր թեմը՝ Քիշնեվ։ Ահա սինոդը նորից ստիպված է օրագրութիւն կազմել և տեղակալութիւնը յանձնել Մկրտիչ Բաբամեանցին։ Ահա այս տեղակալութեան ժամանակ է, որ Մկրտիչ արձակում է Նահապետեանին ճեմարանի տեսչութիւնից և Մակարը իրաւունք չը համարեց դրա դէմ բողոքել։»

—

«Մշակի» № 94-ի մէջ մի տպագրական սխալ է մտել։ Առաջին յօդուածի վերնագիրը պիտի լինէր մատենագրութիւն և ոչ թէ մատենախօսութիւն։ Եթի ճիշդ կերպով թարգմանենք բառը յունաց լեզուից, ուրեմն bibliographia կը նշանակէ մատենագրութիւն և ոչ թէ մատենախօսութիւն։ Graphos նշանակում է գրել և ոչ թէ խօսել։

—

Մեզ գրում են հետևեալը. «Ամսի 21-ին Երևանից հասաւ Նոր-Բայազէտ նահանգական դատարանի մի մասը (սէսիան), տեղացի մի քանի անձանց գործը քննելու համար, որոնք մեղադրվում են սուտ վկայութիւն տալու համար։»

—

ՆՈՐ-ԲՍՅԱԶԷՏԻՑ մեզ գրում են, որ այս տարի հացահատիկների բերքը, թէ Նոր-Բայազէտում և թէ գաւառում, շատ առատ է։ Առատ կերպով որվում է նաև ձուկը։

—

ՅԽԻՆՎԱԼԻՑ մեզ խնդրում են տպագրել հետևեալը. «Ցխինվալի հայոց ծխական ուսումնարանի հոգաբարձութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը տիկին Մարիամ Դաւթեան Պապովնանցին, որը ի յիշատակ իր մարդու, Սպիրիդոն Յովհաննէսեան Պապովեանցի, ընծայում է Ցխինվալի հայոց ծխական ուսումնարանի շինութեանը 2000 ռուբլի։ Նմանապէս յայտնում է իր շնորհակալութիւնը և հետևեալ նուիրատուներին, որոնցից իւրաքանչիւրը 50-ական ռուբլի նուիրեցին յօգուտ նոյն շինութեան, ի յիշատակ իրանց հանգուցեալ ծնողների։ Այս նուիրատուները սրանք են. Յովհաննէս Տէր-Ստեփանեանց, Եղօր Տէր-Կարապետեանց, Ալէքսանդր Զաւրեանց՝ Յովհաննէս Եարալեանց և Սաչինս Մուրադեանց։»

—

«Кавказъ» լրագիրը հաղորդում է, որ օգոստոսի 8-ից մինչև 15-ը ծաղիկ հիւանդութեամբ վարակվել են 11 անձինք, որոնցից 5 մեռել են. բացի դրանից դիֆտէրիտով հիւանդացել են 5 հոգի, որոնցից 4 մեռել են։

—

Տեղական լրագիրները հաղորդում են, որ Պ. Լանկօի տեղական երաժշտական մագազինը մտադրութիւն ունի տօնել իր ֆիրմայի գոյութեան 25-ամեակը։

—

Զորեքշաբթի, օգոստոսի 21-ին Պետերբուրգից հասաւ Թիֆլիս դատաստանական պալատի նոր նշանակված նախագահ Էդուարդ Էդուարդովիչ ֆոն-Վէնդէրիխ։

—

Բաթումից «Нов. Обозр.» լրագրին հաղորդում են, որ օգոստոսի 19-ին կրակ ընկաւ պ. Մանթաշեանի գործատան մէջ, որը շարունակվեց համարեա երկու օր։ Պ. Մանթաշեանի գործատունը ապահովագրված էր 250,000 ռուբլիով, սակայն հրդեհի պատճառած վնասները անհագին են։

—

Մայրաքաղաքի լրագիրները լսել են, որ շուտով կը քննվի բրդի առևտուրը կարգի դնելու և զարգացնելու հարցը կայսրութեան մէջ։

—

Մեզ գրում են ԲԱԹՈՒՄԻՑ հետևեալը. «Շաբաթ, օգոստոսի 24-ին, Էջմիածնի սինոդի պրոկուրոր Կանչէլի այստեղից ուղևորվեց Դիլիժան, ուր մի քանի օր իր ընտանիքի մօտ մնալուց յետոյ, շտապելու է Էջմիածին։»

—

Բարձր կառավարչական անձինքներից մէկը՝ մայրաքաղաքի լրագիրների խօսքերով, մշակել և ներկայացրել է բարձր հիմնարկութիւնների հայեցողութեանը մի նախագիծ՝ արբեցողութիւնը սահմանափակելու հարցի վերաբերմամբ։ Այդ նախագիծը նման է աւստրիական ըէյխսրատին նորերս ներկայացրած օրինագծին։ Մտադրութիւն կայ մի կանոն հաստատել, որով ոգելից խմիչքներ վաճառող բոլոր պանդոկները պէտք է փակվեն ամեն տօների նախընթաց օրերը ոչ ուշ երեկոյեան վեց ժամից և ապա կարող են բացվել միայն մէկ ամբողջ օր անցնելուց յետոյ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԵՒ ԹԻՒՐՔԻԱ

—

Տեղական ռուսաց լրագիրները արտատպել են «National Zeitung» լրագրից վերոյիշեալ վերնագրով հետևեալ յօդուածը։

Գերմանական լրագիրը խօսում է Ռուսաստանի և Անգլիայի մրցութեան մասին արևելքում, ջանք անելով ապացուցանել որ Ռուսաստանը դիտաւորութիւններ ունի, որոնք պիտի վնասեն Պարսկաստանին և Թիւրքիային։ Ռուսաց և անգլիական քաղաքականութիւնը արևելքում զուգընթացաբար են գնում, ասում է լրագիրը, բայց մանաւանդ վերջին ժամանակները այդ մրցութիւնը երկու պետութիւնների մէջ շատ չօշափելի է դարձել։ Ռուսաց տէրութիւնը դժգոհ էր Պարսկաստանի դեսպան իշխան Դոլգօրուկովից և նրա տեղը նշանակեց պ. Խիտրովոին (?) և անմիջապէս Անգլիան էլ յետ կանչեց Դրումմնդ-Վոլֆ դեսպանին ու նրա տեղը նշանակեց իր Բուխարէստի դեսպանին։ Երկու ախոյանները, որոնք իրար ուսումնասիրեցին դիպլոմատիական դաշտում Դունայ գետի ափերում, նորից իրար հանդիպեցին Եփրատի հովտում։ Դրանից քիչ առաջ Անգլիան իր զինուորական հիւպատոսի տեղ Էրզրումում նշանակեց մի քաղաքացիական հիւպատոս,—և Ռուսաստանն էլ անմիջապէս հետևեց Անգլիայի օրինակին։ Այդ բոլորը ցոյց է տալիս որ երկու պետութիւնները իրանց ասիական քաղաքականութեան մէջ չեն ննջում, այլ արթուն են։ Այդ տեսակ պատերազմ խուլ կերպով է առաջ մղվում և ռուսաց քաղաքականութիւնը Արմենիայում մեծ կապ ունի նրա քաղաքականութեան հետ Բալկանեան թերակղզում։ Այդտեղ Ռուսաստանը համարձակ և անկախ կերպով է գործում և այդ ապացուցվում է արդէն դրանով, որ Ռուսաստանը նշանակութիւն չէ տալիս պայմանագիրներին, որի օրինակը կարող է լինել այն իրողութիւնը, որ Ռուսաստանը 1878 թուին Բերլինի կոնգրեսի վճիռներին հակառակ Բաթումը պօրտ-ֆրանկօից ռուսաց նաւահանգիստ դարձրեց։ Ռուսաստանը ամենաաջող կերպով հողեր ձեռք բերեց բարձր Հայաստանում։ Կարս և Նրան չրջապատող երկիրները, որոնք մահմեդականների աւանդութեամբ ապահովացնում են նուաճողին ամբողջ Ասիայի վրա տիրապետութիւնը, անցան ռուսաց ձեռքը։ Այդտեղից հեռու չէ գնալ դէպի Կ. Պոլիս և ճանապարհը բաց է Ռուսաստանի համար։ Այն կարծիքը թէ Ռուսաստանը կերթայ Կ. Պոլիս Փոքր-Ասիայի վրայով՝ ունի մեծ հաւանականութիւն։ Անգլիան 1879 թուին ձեռք բերելով Թիւրքիայից Կիպրոս կղզին, խոստացաւ Թիւրքիային պաշտպանել Նրան Փոքր-Ասիայում։ Անգլիան ստացաւ առիւծի բաժինը և դա հանգուցեալ լորդ Բիկոնսֆիլդի ամենամեծ դիպլոմատիական յաղթութիւններից մէկն էր։ Սակայն, կապէս, այդտեղ էլ Թիւրքիան ոչինչ ապահովութիւն կամ գրաւական ձեռք չը բերեց, որովհետև Արմենիայում իրագործելի բէֆորմների հարցը, երբէք իր լուծումը չը ստանալով, պատրուակ էր դարձել Անգլիայի համար անդադար միջամտելու Թիւրքաց գործերում, և ինչպէս կարծում է գերմանական լրագիրը, Անգլիայի վերջնական նպատակն է յետ մղել Թիւրքիայի տիրապետութիւնը Հայաստանից, որպէս զի դրանով հակակշիռ ստեղծէ Ռուսաստանի դէմ։ Բ. Դուռը շատ դժուար կացութեան մէջ է, որովհետև նա պէտք է հոգայ որ, առաջին համեմատ՝ «թէ ոչխարները կենդանի մնային, և թէ գայլերը կուշտ լինէին։»

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլսի լրագիրներում կարդում ենք.—Ամեն. Ս. Պատրիարք Հայրն՝ ըստ որոշման Խառն Ժողովոյ՝ օգոստոսի 5-ին հետևեալ չրջաբերականը գրված է առ Առաջնորդս և Վանահայրս գաւառաց։ «Եկեղեցական կարգապահութեան պայմանաց համաձայն թէև պէտք չէ որ առաջնորդք կամ տեղապահք նոցին, ինչպէս նաև վանահարք մեկնին իրենց վիճակէն ի Պոլիս կամ այլուր, առանց նախապէս գաւառական վարչութեան կամ Վանական մնօրէն ժողովոյ հետ համաձայնութեամբ որոշելու իրենց պաշտօնատեղիէն հեռանալու հարկն, և առանց Ազգ. Կեդր. Վարչութենէն հարկ եղած արտօնութիւնն ստանալու, սակայն տեսնելով որ ստէպ զանցառութիւնք տեղի կունենան յայսմ մասին, որոշմամբ Խառն Ժողովոյ Կեդրոնական Վարչութեան արժան դատեցաք այսու չրջաբերականաւ բոլոր առաջնորդաց և տեղապահաց նոցին ինչպէս նաև վանահարց յիշեցնել կարգապահութեան և պատշաճութեան այս անխուսափելի պայմանաց գործադրութեան պէտքն. հետևապէս կը հրաւիրեմք և ձեր սիրելութիւնն նմանօրինակ պարագայից մէջ ըստ այսմ պէտք եղածն ի գործ դնել և տեղի չը տալ զանազան անհաճոյ դիտողութեանց և մեկնութեանց»։

«Օգոստոսի 5-ին Կ. Պոլսի պատրիարքական փոխանորդարանը հրատարակել է հետևեալ պաշտօնական ծանուցում. «Անցեալները Մայր Եկեղեցւոյ քահանայից ոմանց համար խօսուեցաւ և լրագրաց մէջ ալ հրատարակուեցաւ թէ Զատկուս գնացեր և անդ արբենալով անվայել չափազանցութեանց տեղի տուեր են, հակառակ չափաւորութեան և պարկեշտութեան քահանայական սուրբ կարգին։ Փոխանորդարանս, ըստ հրամանի Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր, օրինական քննութիւն կատարելով կը ծանուցանէ ի բուժումն գայթակղեալ մտաց ժողովրդեան թէ արդարև քահանայք ոմանք խմբաւեր են ի Զատկուս ի խնջոյս, սակայն որ և է չափազանցութիւն տեղի ունեցած չէ բնաւ։ Եւ որովհետև սկզբմամբ անձնուրացութեան քահանայական կարգի անպատեհ էր քահանայից՝ զուարճութեան համար տեղ ելթալ և խմբուելով խնճոյք ընել, ուստի Նորին Բարձր Սրբազնութիւնն ծանրագէս յանդիմանեց յիշեալ քահանաներն և խրատեց, որ այլ ևս այնպիսի խմբումն և զուարճութեան խնճոյք տեղի չունենան։»

«Հայ-Հռոմէականաց պատրիարք Ազարեան գերապայծառ և Վիէննայի Մխիթարեան վանուց Աբբահայր գեր. Այտընեան Արսէն արքեպիսկոպոս երբեմն օրը կայսերական պալատ գնացին, ու Ազարեան պատրիարք՝ վեհ. սուլթանին պիտի ներկայացուներ Աբբահայրն, սակայն Ն. Վեհափառութիւն՝ Ալի Սաիպ փաշայի մահուան պատճառաւ զգածուած ըլլալով, ունկնդրութիւնը տուղի չունեցաւ։ Վեհ. սուլթանն իւր կայսերական բարևները ղրկեց Ազարեան գերապայծառին ու Աբբահօր, և իմանալով որ Այտընեան գերապայծառ ուղերձ մը պատրաստած է, հրամայեց իրեն մատուցանել, զայն։ Ուղերձը գրուած էր ոսկեթել բանուած պահարանի մը մէջ և արարողապետ Միւնիր փաշայի միջոցաւ մատուցուեցաւ վեհ. սուլթանին։ Տ. Ազարեան պատրիարք ու Աբբահայրն՝ Սկլավերքէն յետոյ այցելութիւն տուին Բարձր. Մեծ-Եպարքոսին և երկար տեսակցութիւն մը ունեցան Ն. բարձրութեան հետ։»

«Կարինէն ուղղեալ մասնաւոր հեռագրոյ մի համաձայն, երեկ ժամ 5½-ին քաղաքին մէջ կարկտաքառն յորդահոս անձրև տեղալով, հեղեղներն ամեն կողմ սարսափուեր են, սակայն զինուորաց, ոստիկանաց և թաղապետական պաշտօնէից ու այլոց կողմէ տեղ տեղ փոսեր փորուեր և ողողմանց առաջքն առնուեր է։ Հեղեղները քչեր տարեր են երկու մարդ և չորս տղաքներ, որք քաղաքէն դուրս ելած էին կապերու և այլն լուալու համար։»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Սակֆանիի գործակալութեանը» Հռոմից հեռագրում են օգոստոսի 24-ին. «Երեկ Մօնտէվիդէոյում, թագաւորի, Տուրինեան կոմսի, մինիստրների և բազմաթիւ հասարակութեան ներկայութեան տեղի ունեցաւ Իտալիայի միութեան սկզբնապատճառի՝ Կարլ Էմմանուէլ դքսի արձանի բացումը։ Ազգաբնակութիւնը մեծ ոգևորութեամբ էր ընդունում ամեն տեղ թագաւորին։»

—«Saale Zeitung» լրագիրը հաղորդում է, որ իշխան Բիսմարկի ոյժերը, ըստ երևոյթին, թուլանում են և յիշողութիւնը վատանում է։

—Անգլիական լրագիրներին Պարիզից հեռագրում են, որ անգլիական թագուհին մտադրութիւն ունի շնորհել նախագահ Կարնօին Բարձրի շքանշանի առաջին աստիճանը։ Լրագիրն աւելացնում է, որ Կարնօ եկող աշնանը կայցելէ Անգլիան։

—«Figaro» լրագրին Լօնդօնից հեռագրում են օգոստոսի 10-ից հետևեալը. «Կալկուտայից ըստացված նամակի մէջ ասված է, որ Կաբուլի էմիր Աբդուրահման-խանը յուսահատ դրութեան մէջ է և նրա հիւանդութիւնը սաստկանում է։ Հնդկաստանի փոխարքան հեռագրով տեղեկացրեց լորդ Սալսբերիին և Հնդկաստանի մինիստրին, որ անյապաղ պէտք է զբաղվել դահաժառանգութեան հարցով Աֆղանիստանում և աշխատել էմիրի կրտսեր որդու համար. նրա միւս որդիքը և նրա եղբայրներից մէկը թշնամի են անգլիացիներին և բարեկամաբար են վերաբերվում ռուսներին։»

—«Արևելքի» մէջ կարդում ենք. «Թիւրքաց կառավարութիւնը կարևոր դատելով որ Ասիոյ մէջ չինուելիք երկաթուղւոյ գծերէ մին անպատ-

ճառ մինչև Պաղատ երկարի՝ այդ կողմերու բարգաւաճման և տնտեսագիտական ու այլ տեսակէտներով զարգացմանը համար, որոշած է այս առթիւ բանակցութիւններ կատարել։ Այս որոշում հաղորդված է մենաշնորհի տեարց։ Սամսոն-Սիբատոյ գծին տրուելու պ. Մաքար, որ Եւրոպա կը գտնուի, ի մօտոյ մայրաքաղաքս դալով, պիտի մասնակցի այդ առթիւ կատարելի բանակցութեանց»։

—«Figaro» լրագրին Պօրտսմութիից հեռագրում են, որ անգլիական թագուհին հրամայեց նկարել իր պատկերը, որը պէտք է ուղարկի նա նախագահ Կարնօին։ Պատկերի շրջանակը զարդարված կը լինի անգլիական և ֆրանսիական զինանշաններով և կը կրի մի խորագիր, որը գրված կը լինի Ֆրանսիայի և նրա նախագահի համար գովասանական բառերով։

—«Figaro» լրագիրը յոյս է յայտնում, որ թէ նեղուցների և թէ Էլզաս-Լոթարինգիայի հարցերը առանց արիւնհեղութեան կը վճռուին։ Առաջին հարցի լուծումը կախված է սուլթանից, որը վաղ թէ ուշ կորոշի իր իսկական բարեկամներին կեղծերից. իսկ ինչ վերաբերում է երկրորդ հարցին, ինքն Ֆրանսիական ժողովուրդը կարող է նպաստել դրա բարեյաջող լուծմանը։ Երբ որ գերմանացիք կը համոզուին, որ Ֆրանսիան միայն իրանից խլված երկրի վերադարձն է պահանջում, և վերջնականապէս հաշտուել է Գերմանիայի միութեան փաստի հետ,—հարցի խաղաղ լուծման գործը անաղմուկ քայլ կանի դէպի առաջ։

—Լօնդօնի լրագիրների տեղեկութիւնների համեմատ, թիւրքերը բերդեր են կառուցանում ռուսաց սահմանի վրա Փոքր-Ասիայում։ Աշխատանքները մեծ եռանդով են կատարվում։ Բ. Դրան հրամանով, նոր ամրութիւններ են կառուցվում, որոնք կը հակեն Հայաստանից կ. Պոլիս տանող զանազան ճանապարհների վրա։ Մի քանի լեռնային անցքերում այնպիսի խողովակներ են շինում, որոնք ջրի մեծ քանակութիւն պէտք է զետեղեն իրանց մէջ։

—Կ. Պոլսից հաղորդում են, որ թիւրք առաջնորդները նորից յարձակում են դրծել։ Սալոնիկում երկաթուղային ճանապարհն ուղղող բանորներից մինը ապանվեց այդ դէպքի ժամանակ, միւսը գերի բռնվեց իր գլխաւորի, իտալացի Սօլլինի հետ միասին։ Աւազակները 2,000 ոսկի փրկանք են պահանջում։

—Այս օրերս վախճանվեց թիւրքաց զինուորական մինիստր Ալի-Սաիբ-փաշա։ Նրա տեղ նշանակված է Պլէվնայի պաշտպան Ղազի-Օսման փաշան, որն իր պալատական պաշտօնն ևս պահում է։

—«Սապահ» լրագրի խօսքերով, կ. պոլսեցի հայերից մէկը 30,000 ր. նուիրեց հայոց պատրիարքին այն պայմանով, որ այդ դրամագլխի տոկոսը իւրաքանչիւր տարի բարեգործական նպատակով գործադրվի։

ԽԱՒԻՆ ԼՈՒՐԵՐ

Կիսինգէն գնալու ժամանակից օր չէ անցնում, որ իշխան Բիսմարկ մի քանի չքեղ փունջեր չը ստանայ։ Այդ հանգամանքը շատ է զարմացնում Նրան և այս օրերս այդ առիթով մի սրամիտ նկատողութիւն արաւ։ «Առաջ ևս շատ քիչ ծաղիկներ էի ստանում. իսկ այժմ փունջեր շատ եմ ստանում. գոնէ այդեպանները մի փոքր շահվեցին իմ հրաժարականից։»

* * *

Բերլինում լոյս տեսաւ «Իշխան Բիսմարկի վախճանը արտաքին քաղաքականութեան մէջ» վերնագրով մի բրոշիւր։ Այդ բրոշիւրը, որը մեծ աղմուկ հանեց, աշխատում է ապացուցանել, որ իրանց բոլոր աջողութիւններով գերմանացիք պարտական են զինուորական քաջագործութիւններին, և ոչ թէ իշխան Բիսմարկի քաղաքական հեռատեսութեանը։

* * *

Աւելի և աւելի է հաստատվում, որ աշխարհաշէջ գերմանացի երաժիշտ Լուդվիգ վան Բեթովէն հօլանդական ծագումից էր։ Նրա մեծ պապը (այսինքն պապի հայրը) հօլանդացի էր և ապրում էր Անավերպէն քաղաքում։ Հէյնրիխ Ադէլարդ վան Բեթովէն արհեստով դերձիկ էր։

* * *

Ամենքին յայտնի է, որ թիւրքաց քաղաքների փողոցներում շները անպակաս են։ Թիւրքերը շատ էլ հաւատ չընծայելով իրանց ոստիկանութեան հակողութեանը, նայում են շների վրա, ինչպէս սանիտարական (առողջական) ոստիկանութեան վրա. յայտնի է որ շները ուտում են մթերքների ամեն տեսակ մնացորդներ, որ թիւրքաց բարեկարգ քաղաքներում բնակիչները առանց այլևայլութեան փողոցն են նետում։ Եւ ահա, Նորերումս, Սալոնիկի քաղաքի բազմաթիւ շների մէջ ջրվախութիւն յայտնվեց. շները անողորմ կերպով թէ միմեանց և թէ բնակիչներին էին կծում և շատերը սատկում էին կատաղութիւնից.... Վերջապէս ժողովուրդը վրդովվեց և օտար հիւպատոսները բողոքեցին.... Սակայն ինչ արեց թիւրք վարչութիւնը. կարծում էք սկսեց կոտորել շներին, կամ նրանց բռնել ու ջուրը նետել։ Ամենևին ոչ. հրամայված էր բռնել շներին, գցել մեծ քսակների մէջ, և տանել քաղաքից դուրս.... Այնտեղ նրանց կրկին բաց թողեցին.... Թող վազեն ուր ուզենան, իսկ եթէ պատահի որ մարդկանցից մէկն ու մէկին դարձեալ կը կծեն,—կը նշանակէ դա Ալլահի կամքն է.... Ինչ-ալլահ....

* * *

Ցայսմիկ է որ ամբողջ Եւրոպայում բուլէտի խաղը արգելված է. միայն Մօնակօի դքսութեան մէջ այդ խաղը մինչև այսօր գոյութիւն ունէր։ Իսկ այժմ լսվում է, որ Մօնակօումն էլ բուլէտը պիտի շուտով դադարի գոյութիւն ունենալուց։ Դեռ 1858 թուին մի ոմն պ. Բլան ներկայացաւ Մօնակօի դուքս Հօնորիուսին և առաջարկեց Նրան 10 միլիոն ֆրանկ տարեկան եկամուտ, եթէ նա թոյլ տայ իր դքսութեան մէջ բուլէտը հաստատելու։ Դուքսը, որը ընդամենը 10,000 բնակիչ և 15,000 ֆրանկ տարեկան եկամուտ ունէր, անմիջապէս համաձայնվեց, անտես առնելով թէ որքան վնասակար ձեռնարկութիւն է բուլէտը։ Այժմ Հօնորիուս դքսի թոռը, դուքս Ալբերտ, իմանալով որ պ. Բլանի հետ կապված պայմանագրի ժամանակամիջոցը շուտով վերջանում է, այլ ևս չէ ուզում վերանորոգել յիշեալ պայմանագիրը։ Դուքս Ալբերտ աւելի գործնական գտնվեց. նա սիրահարվեց մի հարուստ այրի կնոջ վրա և պսակվեց նրա հետ։ Այժմ նա կարիք չունի պ. Բլանի պայմաններն ընդունելու և կարող է ապահով կերպով ապրել և ուսումնական զբաղմունքներին նուիրվել, քանի որ նա շատ է սիրում այդ պարապմունքները։ Ալբերտ դուքսը պսակվեց այրի դքսուհի Բիշելիի հետ, մի հրեուհի, որը օրիորդ ժամանակ կրում էր Հէյնց-Էմբէրն ազգանունը։ Պ. Բլան առաջարկում է Եւրոպական ուրիշ փոքրիկ իշխաններին հաստատել իրանց երկրում բուլէտը, առաջարկելով շատ ձեռնտու պայմաններ,—բայց առ այժմ ոչ ոք այդ իշխաններից չէ համաձայնվում։ Լիխտենշտէյն իշխանին նա առաջարկում է տարեկան 10 միլիոն ֆրանկ եկամուտ, յանձն է առնում իր հաշուով իշխանութեան ճանապարհները շինել և իր հաշուով պահպանել, նմանապէս իր հաշուով երկրի զորքը պահպանել, և այլն։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 օգոստոսի։ «Нов. Время» լրագիրը հաղորդում է, որ ներքին գործերի մինիստրութեան մէջ նախապատրաստական աշխատանքներ են սկսվել՝ գիւղական ազգաբնակութեան տնտեսական կարիքները լրացնելու համար զեստվոների ձեռնարկութիւնների վերաբերեալ պայմանները որոշելու նպատակով։

ՄԻՏԱՎԱ, 22 օգոստոսի։ Կուրլիանդեան նահանգական վարչութեան անդամները և ծառայողները վճռեցին իրանց առճկից ամսական մի որոշեալ պրոցէնտ յատկացնել յոգուտ սովատանջ նահանգների։

ՊԱՐԻԶ, 22 օգոստոսի։ Մեծ Իշխան Ալէքսի Ալէքսանդրովիչ վճռեց կրկին մի առժամանակ մնալ Վիշիում։

ՐՕՍՏՕԿ, 22 օգոստոսի։ Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ իր ամուսնու հետ ճանապարհ ընկաւ դէպի Պարիզ։

ԲԵՐԼԻՆ, 22 օգոստոսի։ Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ Բերլինում օրից օր թանգանում են կենսական մթերքները, և նոյնպէս բազմանում է անգործների թիւը, այստեղի քաղաքային դումայի սոցիալիստ անդամները հետեւեալ առաջարկութիւնն արին. շուտով սկսել քաղաքային շինութիւնների կառուցումը մեծ չափերով, քաղաքի հաշուով ուտելեղէն մթերքներ և վառելիք գնել և իր գնով ծախել, և որտեղ հարկաւոր կը լինի, բաժանել մթերքները և շորը ձրի. բացի դրանից, անվարձ բնակարաններ պահել մրսողներին տաքացնելու համար, տալով նրանց ձրի սուրճ, թէյ, կաթ, և տաք նախաճաշիկ բաժանել դպրոցներում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 օգոստոսի։ Այսօր պալէստինեան ընկերութիւնը մի էկսպէդիցիա է ուղարկում ս. երկիրը հին-քրիստոնէական յիշատակարանները հետազօտելու համար։—«Нов. Время» լրագիրը հաղորդում է, որ շուտով կարգադրութիւն կը լինի, որ դեմտվոները, կարօտ ազգաբնակութեանը նպաստներ բաժանելու ժամանակ, մթերային փոխառութիւններ տան կամ փոխառութիւններ տան նոյնպէս կարօտ հոգևորականութեանը և եկեղեցական սպասաւորներին դաշտերը սերմանելու համար։

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ, 22 օգոստոսի։ Այստեղ հասան ամերիկական ինժեներներ Սիբիրի երկաթուղու կառուցման պայմանների հետ ծանօթանալու նպատակով։ Լսվում է, որ ինժեներների գալուստը կապ ունի հարուստ ամերիկական ընկերութեան դիտաւորութեան հետ՝ յանձն առնել վերոյիշեալ ճանապարհի կառուցումը։

ԲԵՐԼԻՆ, 22 օգոստոսի։ Գերմանական կայսրը գնաց ներկայ լինելու աւստրո-ունգարական զօրքերի մեծ զօրախաղերին, որոնք տեղի կունենան այս օրերս Ֆրանց-Յովսէփ կայսրի ներկայութեամբ Ստորին-Աւստրիայում։ Վիլհէլմ կայսրի սվիտայում գտնվում է գերմանական կայսերական կանցլերը, իսկ աւստրիական կայսրի սվիտայում՝ աւստրո-ունգարական արտաքին գործերի մինիստրը։

ՊԱՐԻԶ, 22 օգոստոսի։ Զինուորական գործողութիւնների տեղի վրա 1814 թուին, Aube գետի վրա այսօր կը սկսվեն ֆրանսիական զօրքերի մեծ զօրախաղերը։

ՕԴԷՍԱ, 23 օգոստոսի։ Շատ հաց են բերում Օդէսա. վերջին օրերը 500-ական վագոններ են ստացվում և բացի դրանից, դնեպրովեան և դնէպրովեան չրջաններից օրական մի քանի հազար չէտվերտ վարսակ է ստացվում։ Շուկայի տրամադրութիւնը հանգիստ է. հարցնում են բացառապէս ցորեն առանց հաճարի խառնուրդի։ Աշնանացան լաւ ցորենի համար երէկ վճարվում էր 1 ր. 36 կոպէկ։

ԿՕՊԵՆՀԱԳԷՆ, 23 օգոստոսի։ Պաշտօնական տեղեկութիւններին համեմատ, Մեծ Իշխան Գէօրգի Ալէքսանդրովիչ, այսօր երեկոյեան ճանապարհ ընկաւ Համբուրգով դէպի հարաւ։

ՊԱՐԻԶ, 23 օգոստոսի։ Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ իր ամուսնու հետ միասին երէկ երեկոյեան ժամանեց այստեղ։—«Figaro» լրագրի տեղեկութիւններին համեմատ, Բելգրադում լուրեր են պատում, որ Սատմբուլով սպանված է, բայց այդ լուրերը դեռ ևս կարօտ են հաստատութեան։

Կ. ՊՕԼԻՍ, 23 օգոստոսի։ Մեծ-վիզիր Քեամիլ-փաշան հրաժարեցրած է իր պաշտօնից։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ, 23 օգոստոսի։ Շվէդական թագաւորը կը գայ այստեղ այսօր, կէսօրից յետոյ 1 ժամին և ներկայ կը լինի նախաճաշին, իսկ շաբաթ օր կերթայ Խվէէն կղզին՝ նապաստակներ որսալու։—Երէկ երեկոյեան Նոցա Կայսերական Մեծութիւնները, Օգոստափառ Երեխաներով և ուրիշ բարձրաստիճան անձինք ներկայ էին ներկայացմանը արքայական թատրոնում, ուր ջերմ դիմաւորութիւն արաւ նրանց բազմաթիւ հասարակութիւնը։

ՇԱՆԽԱՅ, 23 օգոստոսի։ Իշանգում, Եանցէ-կիանգ գետի վրա գտնվող քաղաքում, տեղի ունեցաւ հակաեւրոպական ապստամբութիւն. քրիստոնէական միսսիաների և եւրոպացիների շատ կայքեր այրված են, բայց սպանութիւններ չեղան։

ՎԻԷՆՆԱ, 23 օգոստոսի։ «Neue Freie Presse» լրագրի տեղեկութիւններին համեմատ, Շվարցենաու, ուր գտնվում է նոյնպէս Վիէննայի գերմանական դեսպան, պրինց Բէյս, ըստ երևոյթին, նշանաւոր պայմաններ կապվեցան։ Որ երկու թագաւորներն ևս շարունակում են յարաբերութիւններ պահպանել Ումբերտօ թագաւորի հետ, այդ երևում է նրանից, որ մինիստր նախագահ Դէ-Ռուդինի Մօնցու կանչվեց։ Երեքպետեան դաշնակցութեան վերաբերումը դէպի անցքերի մէկ ամբողջ շարքը՝ լուրջ խորհրդակցութիւնների պատճառ դարձաւ և դրանք առաւել ևս աւելացան Կ. Պոլսի անցքերով։

ԲԵՐԼԻՆ, 23 օգոստոսի։ Պետական տնտեսութեան ճիւղերի մեծ մասում նախահաշուից դուրս արած ծախսերը ծածկելու համար, նախագծվում է, որպէս ասում են, պրուսական պետական նոր փոխառութեան հրատարակումն։

ՎԻԷՆՆԱ, 23 օգոստոսի։ Այն ժամանակ, երբ թագաւորները ներկայ էին զօրախաղերին, գեներալ Կապրիվի և կոմս Կալնոկի ամբողջ երէկվայ օրը միասին անցրին Մայէրս ամրոցում, Շվարցենաու մօտ։

ՄԱԴՐԻԴ, 23 օգոստոսի։ Մէդինա-Կամպօում երկաթուղու գնացքների ընդհարում տեղի ունեցաւ։ 48 մարդիկ են վիրաւորված, բայց ըստ պանվածներ չը կան։

Կ. ՊՕԼԻՍ, 23 օգոստոսի։ Մեծ վիզիր նշանակված է Կրետէի այժմեան նահանգապետ Զէֆիզ-փաշա. արձակված են վեց ուրիշ մինիստրներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 օգոստոսի։ Նորին Կայսերական Մեծութեան ուկազով. սրբազան սինոդը խորհրդածեց տարվայ անպտղաբերութիւնից մի քանի նահանգներին հասած թշուառութիւնների և հոգևորականութեան կրած չափազանց կարիքի մասին։ Սինոդը հրամանագրում է՝ թեմերում, պատարագից յետոյ առանձին խնդրուածքներ կարդալ. դնել տաճարներում յատուկ գանձանակ յոգուտ անպտղաբերութիւնից վնասվածների. սինոդային դրամատեակների և թեմական սրբազանների հոգացողութեանը յանձնել, որպէս զի մենաստանները և աւելի ապահովված վանքերը և եկեղեցիները իրանց միջոցներից դրամական նպաստներ տան յոգուտ կարօտեալների և չը դադարեն կերակրել չուտորներին. յատուկ մասնաժողովներ կազմել կամաւոր նուիրատուութիւններ ժողովելու համար. նահանգական մասնաժողովների հոգացողութեանը յանձնել ձրի սեղանատների կազմակերպութիւնը. յայտարարել, որ նուիրատուութիւններն ընդունում է սինոդն և մասնաժողովին կից տնտեսական վարչութիւնը։

ՀԱՄԲՈՒՐԳ, 24 օգոստոսի։ «Hamburger Nachrichten» լրագիրը Դարդանէլի հարցի վերաբերմամբ հետեւեալ տեսակէտն է ընդունում. եթէ որ Բերլինի դաշնագիրը Բոլգարիայի վերաբերմամբ խախտվեց ի վնաս Ռուսաստանի, այն ժամանակ Ռուսաստանը կարող է Պարիզի խաղաղութեան որոշումները վերացնել։ Նեղուցների վերաբերեալ պայմանագրում, որ կցված է Պարիզի դաշնագրին, խօսքը սուլթանի կամքի մասին է միայն. հետևարար սուլթանի կամքի փոփոխութիւնը կարող է նոր դրութիւն ստեղծել։ Առանձին զիջումն Ռուսաստանին, դրա նաւերի անցնելու վերաբերմամբ, դաշնագիրը ստորագրող միւս պետութիւններին իրաւունք չի տայ նոյնպէս պահանջել, որ իրանց նաւերն ևս անցնեն Դարդանէլի միջով։

ԼՕՆԴՕՆ, 24 օգոստոսի։ Երկարատև բանակցութիւններից յետոյ, Բ. Դրան և պ. Նելիդովի մէջ համաձայնութիւն կայացաւ. ռուսաց սեւծովեան նաւահանգիստներում զինուորներին և տաժանակիր աշխատանքներին դատապարտվածներին նաւեր նստեցնելու դէպքում, ռուսական դեսպանութիւնը պէտք է տեղեկացնէ Բ. Դրանը, որը այդ դէպքում թոյլատրում է Դարդանէլի միջով նաւերի անցնելը։ Ռուսաստան վերադարձող արձակման թուղթ ստացած զինուորներին Բ. Դուռը թոյլատրում է ազատ անցուդարձը նաւի հրամանատարի վկայութեան հիման վրա։

ՊԱՐԻԶ, 24 օգոստոսի։ Պաշտօնական տեղեկութիւնները հաստատում են վերջին լուրերը Զինաստանում պատահած խռովութիւնների մասին։ Բէլգիական երկու միանձնուհիներ և բէլգիական մի աբեղայ սպանված են։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 օգոստոսի։ Վատ պտղաբերութեան հետևանքները թուլացնելու համար, էժանացվում է երկաթուղիներով չրջելու վարձը այն անձանց համար, որոնք ստիպված են լինում ուղևորվել կոմունակի աշխատանքի համար մի քանի կենտրոնական նահանգներից։ Երկաթուղիների դէպարտամէնտին իրաւունք է տրվում այդ կանոնը տարածել և այլ տեղերում, եթէ որ այդ հարկաւոր կը համարվի։ Վերոյիշեալ պակասեցրած տարիֆը կը գործադրվի օգոստոսի 8-ից։—«Гражданинъ» լրագիրը հաղորդում է, որ ոստիկանութեան բաժնի փոխ-դիրեկտորը ուղևորվեց դէպի զինաբուրգ-վիտեբսկեան երկաթուղու չրջանը, հացի ապրանքների գնացքները ուղարկելու առիթով այնտեղ պատահած անկարգութիւնները հետազօտելու համար։

ՇՏԷՏԻՆ, 25 օգոստոսի։ Այսօր, կէսօրից յետոյ 6 ժամին «Царевна» նաւով ժամանեց այստեղ Մեծ Իշխան Գէօրգի Ալէքսանդրովիչ, և մի փոքր յետոյ, ճանապարհ ընկաւ դէպի Վարշավա։ «Царевна» նաւը այսօր ծովը մտաւ։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Օգոստոսի 23-ին

Լօնդոնի վրա	10 ֆունտ արժէ	91	ր. 50	կ.
Բերլինի վրա	100 մարկ —	45	» —	»
Փարիզի վրա	100 ֆրանկ —	36	» 05	»
Ռակլի	— — արժէ	7	» 45	»
Մաքսային կուպօններ	—	150	» —	»
Արծաթ	— — —	—	» —	»
Բօրսային դիսկօնտներ	—	4	» 5%	»
Պետ. բանկի 5% տոմս	1 չրջանի	103	» —	»
— — — —	2-րդ —	103	» —	»
— — — —	3-րդ —	—	» —	»
— — — —	4-րդ —	—	» —	»
— — — —	5-րդ —	—	» —	»
— — — —	6-րդ —	102	» 75	»
6% ոսկեայ ըէնտա		152	» —	»
4% ոսկեայ փոխառութիւն		—	» —	»

Արևելեան 5% փոխառ. 1-ին չրջ.	—	» —	»
— — — — 2-րդ —	100	» 75	»
— — — — 3-րդ —	102	» —	»
Ներքին 5% առաջին փոխառութ.	239	» —	»
— — երկրորդ —	229	» 29	»
Պետական. երկաթուղային բէնտա.	103	» 50	»
5½% բէնտա	96	» —	»
5% ներքին փոխառութիւն	99	» 75	»
4% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	102	» 25	»
Ազն. կալ. բանկի խաղարկութեան գրաւ. թղթ. — — ,	210	» 50	»
5½% վկայակ. գիւղ. հող. բանկի.	104	» 25	»
4½% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկեր. մեռալ. .	143	» 75	»
— — — թղթադ.	101	» —	»
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները. .	101	» 62	»
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	100	» 87	»
Օդէսայի — — .	100	» 62	»
Թիֆլիսի — —	—	» —	»
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	—	» —	»
— — Քութայիսի — — .	—	» —	»

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը խաղաղ է։

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԻՑ ԹԻՖԼԻՍ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

Աւչալայի աղբիւրները տալիս են ներկայումս օրական 307,000 վեդրօ Ջուր, այն ինչ Ջրանցքի աբօնէնտները, առանց որ և է անտեսութեան բանեցնելով Ջուրը, բանեցնում են օրական 420,000 վեդրօ Ջուր, և այդ պատճառով Ջրանցքի Վարչութիւնը ստիպված է լինում ամեն օր աւելացնել աղբիւրի Ջրին մօտ 120,000 վեդրօ ներկայումս չափազանց պղտոր դետի Ջուր, որը վերին ասիճանի վնասում է Ջրանցքի Ջրի արժանաւորութեանը։

Որովհետև քաղաքի բոլոր բնակիչները հաւասարապէս ցանկանում են, որ լաւ Ջուր մատակարարվի նրանց, իսկ ներկայ հանգամանքներում այդ նպատակին կարելի է հասնել միմիայն քաղաքի բնակիչների օգնութեամբ, այդ պատճառով Քաղաքային Վարչութիւնը խոնարհաբար խնդրում է, կարելւոյն չափ, պակասեցնել Ջրի գործածութիւնը շռայլութեան առարկաների վրա, որպէս են ֆօնտանները, այգիների և բակերի Ջրելը, կառքերի լուանալը և այլն, և նոյնպէս աւելի մտաւորապես վերաբերվել տնային պէտքերի համար Ջուր գործածելուն։

Եթէ քաղաքացիք կը կատարեն քաղաքային վարչութեան այս խնդիրքը, այն ժամանակ կարելի կը լինի յուսալ, որ աղբիւրի 307,000 վեդրօ Ջուրը կատարելապէս կապահովացնէ քաղաքի աղգաբնակութիւնը, և Ջրանցքի Վարչութիւնը ստիպված չի լինի Ջրի մատակարարման կանոնների հիման վրա իրան տրված արտակարգ միջոցներին դիմել։

Վերոյիշեալին վարչութիւնն անհրաժեշտ է համարում աւելացնել, որ այդ կանոնների հիման վրա, եթէ որ անուշադիր կը վերաբերվեն բնակիչները վերոյիշեալ հրաւէրին, նա, այսինքն վարչութիւնը, ստիպված կը լինի բաժանել քաղաքը երկու մասի և քաղաքի վերոյիշեալ մասերին աղբիւրի Ջուր մատակարարել երկու օրը մի անգամ։

Մի և նոյն ժամանակ, քաղաքային Դումայի 1891 թ. յունիսի 28-ի որոշման զօրութեամբ, պ. քաղաքագլուխը կարգադրել է ժամանակաւորապէս բանալ դէպի դետը տանող հետևեալ 8 ճանապարհները։ 1) Մուշայիդեան փողոցը, 2) Ֆիզիկական դիտանոցի մօտ, 3) Կօրգանօվեան կղզու վրա, 4) երկրորդ անցարանի մօտ, 5) Մաղաթօվեան կղզու հիւսիսային անկիւնի ձախ դետառուի մօտ, 6) Գօգիլօի բաղնիսից ներքև, 7) Վէրա դետակի մօտ, ուր կանգնում են լաստերը և 8) Աբբուզնայա հրապարակի մօտ։

ՎԱՃԱԼՈՒՔ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ

Նոր տանը. Կուկիա, անկիւն Ելիսավետեան և Կիրօչնի փողոցների. եօթ և վեց սենեակներով. ունեն առանձին շքեղ մուտքեր, Ջրանցքներ, բաղանիքներ, վատերկլօզետներ և բոլոր յարմարութիւններ։ 1—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ խնդրում է ՀԻՐԱՆՈՑՆԵՐԻ, ՃԱՇԱՐԱՆՆԵՐԻ, ՆՊԱՐԱՎԱՃԱՌՆԵՐԻ և ԻԶԵՒԱՆԱՏԵՂԵՐԻ տէրերին շնորհ բերել առաջիններին այս տարվայ սեպտեմբերի 9-ին, իսկ վերջիններին սեպտեմբերի 10-ին, առաւօտեան 10 ժամին Վարչութեան շինութեան մէջ իրանց միջից պատգամաւորներ ընտրելու 1892—1895 թուերի քառամեակի համար, համաձայն նպարավաճառ հիմնարկութիւնների վերաբերեալ 22 և 56 յօդուածների։ 1—3

Պատիւ ունեմ յայտնելու Կովկասեան և Անդրկովկասեան պատուելի հասարակութեանը, որ եղբարք ԱԲԳԱՐԵԱՆՑՆԵՐՍ, կատարելով **ԿՕՄԻՍԻԱԿԱՆ** գործեր ՕԴԷՍԱՅՈՒՄ ընդունում ենք յանձնարարական պայմանով զանազան ապրանքներ վաճառելը։ Նաև կատարում ենք՝ ապրանքներ գնելու, ծախելու և ուղարկելու պատուէրներ։

Պայմանների մասին դիմել. *ОДЕССА, Никитѣ Анкарову.* 2—5

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊՐՕՖԷՍԻՕՆԱԼ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԸ սեպտեմբերի 1-ից փոխադրվում է Շիօեվի տունը, Միջի-փողոցում, ուր և կընդունվեն աշակերտուհիները 12 տարեկան հասակից բարձր, տարրական դպրոցի դասընթացի դիտութեամբ։ Ուսումը ձրի է։ Մի և նոյն դպրոցում ՀԱՍԱԿԱՒՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՆ ԳԼՕԴԶԻՆՍԿՈՒ ՄԵԹՕԴՈՎ ԵՒ ՇԷՖԷՐԻ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՍԻՍՏԵՄՈՎ ՀԱՆԴԵՐՁՆԵՐԻ ԵՒ ՍՊԻՏԱԿԵՂԷՆԻ ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ ԿՈՒՐՍԵՐ, և մի և նոյն ժամանակ ամեն տեսակ կանացի ձեռագործերի կուրսեր ամսական 2 ռուբլի վճարով։ 2—5

Լոյս տեսաւ

ՍԱՄՈՒԷԼ ԲԱԼԱՂԵԱՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

„ՄԻԿՐՕԲՆԵՐԸ“։

Ծախվում է կենտրօնական գրավաճառանոցում։ 3—3

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու ՄԱՏՉԵԼԻ ՁԵՌՆԱՐԿ առևտրական հաշուարարութիւնը առանց ուսուցչի օգնութեանը ուսումնասիրելու համար։

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՁԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇԻԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տոկոսների լիակատար աղիւսակներով, 1-ից մինչև 10,000 ռուբ. համար. 1%-ից մինչև 12%. Վաճառվում է եղբարց Ծօվիանօվների բանկային գրասենեակում և հեղինակի մօտ. Тифлисъ, Нагорная ул., № 9. Օտարաքաղաքացիք դիմում են վերջին հասցէով С. П. Мануэльянцу.

Գինն է 1 ռուբլի։ Փոստի ծախս 21 կոպ. Գրավաճառներին զիջում կը լինի։

Ե ԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՑԻՉ (ուսուցչական ինստիտուտ աւարտած) կամենում է ուսուցչի տեղ ունենալ Հայոց ուսումնարաններում։

Հասցէն՝ Михаиловская улица домъ № 55. 2—3

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Սուրբ Գայիանեան օրիորդաց ուսումնարանում աշակերտուհեաց ընդունելութիւնը սկսվում է օգոստոսի 28-ին։

Նախագահ վարչութեան՝ Ղ. ա. ք. Խարազեանց 2—2

Ներկայ թուականի սեպտեմբերի 1-ից սկսեալ, մի ուսեալ հայ ընտանիք Թիֆլիսում ընդունում է **ԳԻՇԵՐՕԹԻԿ** աշակերտներ, որոնք կարող են բացի ռուսերէնից նաև գերմաներէն և ֆրանսերէն լեզուների գործնական վարժութիւններ ունենալ։ Ցանկացողները թող դիմեն „Մշակ“ լրագրի խմբագրատունը։ 9—12 (Ե. 2.)

ԴՊՐՈՑ-ՊԱՆՍԻՕՆ ԵՒ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆ—ԵՐԿԱՑՆԱԲԱԶՈՒԿԻ

Ֆրէյլինսկայա փողոց, տ. № 4 Աշակերտների ընդունելութիւնը կը սկսվի օգոստոսի 26-ից, իսկ ուսումը կը սկսվի սեպտեմբերի 2-ին։ 2—4

ՊԱՆՍԻՕՆ ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

ԳԻՄՆԱԶԻԱԿԱՆ ՀԻՆԳ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՎ

Նորին գերազանցութեան կովկասեան ուսումնարանական շրջանի պ. Հոգաբարձուի կարգադրութեամբ յուլիս ամսի վեցից վերափոխվում է հինգդասարանական ուսումնարանի պետական գիմնազիայի և բէալական ուսումնարանի ծրագրով։

Պանսիօնում կաւանդվեն՝ կրօն, հայոց եկեղեցական պատմութիւն, մեկնութիւն պատարագի հայոց, հայոց լեզու (հայերի համար), ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն, լատիներէն, յունարէն, վրացերէն, թուրքերէն լեզուներ, թուաբանութիւն, ալգեբրա, երկրաչափութիւն, ընդհանուր պատմութիւն, ռուսաց պատմութիւն, ընդհանուր աշխարհագրութիւն, Ռուսաստանի աշխարհագրութիւն, բնական պատմութիւն, նկարչութիւն, գրութիւն, խմբական երգեցողութիւն, երաժշտութիւն, պար, մարմնամարզութիւն։

Պանսիօնում պատրաստվողները կարող են մտնել գիմնազիայի, բէալական ուսումնարանի, Լազարեան ճեմարանի մինչև հինգերորդ դասատուն. նոյնպէս զէմէէմէրնի, տեխնիկան և այլ միջնակարգ ուսումնարաններում։

Աշակերտներ ընդունվում են թոշակաւորներ, կիսաթոշակաւորներ և երթևեկներ։ Ընդունելութիւնը կը սկսվի օգոստոսի 20-ից։

Հասցէն. Тифлисъ, Сололаки, Вельяминовская улица, домъ № 11. 6—10 (Շ)

ԵՐԿՈՒ ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐ ցանկանում են դասեր ունենալ Հայոց ծխական դպրոցներում ձեռագործի, թուաբանութեան, գծագրութեան, վայելչագրութեան։

Պայմանների մասին դիմել. Армянскій базаръ, Шубный рядъ, домъ Абесоломова № 3. 3—3

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆԶԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկայք սոքա են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական Թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) գեղագրութիւն։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնները սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Աղէքսանդր Փրիդօնովի տանը, № 9 Սերգիէվսկայա և Նագորնայա փողոցների անկիւնում, դեղատան դիմաց։ Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ՁՐԻԱՊԵՍ եղբ. Ծօվիանօվների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу. 15—25 (Ե. Շ.)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Շոգենաւերի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ, չորեքշաբթի 9/21 յունվարից սկսած

ԵՒ ՓՈԽԱԴԱՐՁ

Բաթումից Մարսէլ, մանելով Տրապիզօն, Սամսօն, և կ. Պոլիս։

ԲԱԹՈՒՄԻՑ ՇՈԳԵՆԱՒԵՐԸ ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Չորեքշաբթի,	17/29 յուլիսի	—	ՍԻՐԿԱՍԻ	— ԲՕՇԷԼ.
—	31 յուլիսի (12 օգոստոսի)	—	ԱՆԱՏՕԼԻԱ	— ԳԱԲՐԻԷ
—	14/26 օգոստոսի	—	ՄԻՆԳՐԵԼԻԱ	— ԺԻԲՈՒԷՆ
—	28 օգոստոսի (9 սեպտեմբերի)		ՍԻՐԿԱՍԻ	— ԲՕՇԷԼ.

և այլն, երկու շաբաթ մի անգամ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ օրերը, 4 ժամին կէսօրից յետոյ։ Տօմսակների գները ուղղակի երթևեկութեան Բաթումից դէպի Պարիզ իսկական գնից պակսեցրած են։

Տեղեկութիւնների համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճեն դիմել ընկերութեան ագենտներին. ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գարանիօնին, Նաբերէժնայա, ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. Վիկտոր դ'ԱՐՆՕԻՆ, Միջին-փողոցում, Նախկին գեներալ Տէր-Աստատուրովի տանը, ԲԱԳԻՈՒՄ, Սամուէլ Դիլդարովին, Կօլիւբիակինսկայա հրապարակ, և ՆՈՎՈՐՕՍԻՑՍԿՈՒՄ պ. Լուի Բլնօին։ 12—12 (Ե. 2.)

Дозволено цензурою, Тифлисъ, 26 Августа 1891 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 22